

# ՊԱՏՄԱԿԱՆ ՇԱԲԱԹԱՎԵՐՁ ՎԷՆԳՈՒՎԸՐԻ ՄԷՁ

9-10 Յունիս 1990, Շարաթ եւ Կիրակի օրերը, Պրիթիչ Գոլոմպիայի եւ մօտակայ նահանգներուն մէջ հաստատուած հայորդիներու յիշողութեան եւ հայ տարեգրութեան կէտրուն մէջ արձանագրուեցան որպէս անմոռանալի ու պատմական օրեր՝ ազգային-կրօնական անզուգական ապրումներով լի, երբ Ռիչմընտի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ համայնքը վայելուչ շուքով ընդունեցաւ հովուապետական այցը Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին, եւ Նորին Սրբութեան հովանաւորութեան ներքեւ ու մասնակցութեամբը հոգեւորական հայրերու շքախումբի մը եւ շուրջ 500 հայորդիներու, տօնախմբեց ծուխիս հիմնադրման 10-ամեակը, որուն խնդակցեցան կառավարական, կրօնական եւ մարդասիրական միութեանց բազմաթիւ ներկայացուցիչներ: Առաւել, նորաշէն եկեղեցւոյ ու հայ կեդրոնի համալիրը բարեգարդուեցաւ ու պարտամուրհակը վըճարուեցաւ: Այս առթիւ, Վեհափառ Հայրը «Կիլիկիան Իշխանի եւ Իշխանուհիի» շքանշանով պատուեց Տէր եւ Տիկին Ճորճ Աղազարեանը՝ հայ եկեղեցւոյ ու ժողովուրդին հանդէպ իրենց ցուցարբերած աւելի քան քսան տարիներու սիրոյն եւ նուիրումին համար:

Վեհափառ Հայրապետի այցելութիւնը նաեւ այլ մակարդակներու վրայ եւս յատկանշական դարձաւ, որոնց մանրամասնութիւնները կ'արձանագրենք ստորեւ:

## ԺԱՄԱՆՈՒՄ, ԿԱՆՈՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ ԵՒ ԱԶԱՀԱՄԲՈՅՐ

Գարեգին Բ. Կաթողիկոս, Կիլիկեան միարանութեան անդամներէ բաղկացած շքախումբով մը, որուն մաս կը կազմէին Բարձր. Տ. Մեսրոպ Արք. Աշճեան — Առաջնորդ, Հիւս. Ամերիկայի Արեւելիան Շրջանի եւ Գանատայի—, Բարձր. Տ. Տաթև Արք. Սարգիսեան — Առաջնորդ Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Թեմին—, Գերշ. Տ. Եփրեմ Եպս. Թապազեան — Հոգեւոր Տնուչ Կլեմտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ—, Գերպ. Տ. Խաթալ Մ. Վրդ. Յակոբեան — Հոգեւոր Հովիւ Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ—, եւ Հոգշ. Տ. Բարգէն Վրդ. Չարեան — գաւազանակիր—, Վանդուվրի միջազգային օղակայան ժամանեց Շարաթ, 9 Յունիսի կէսօրուան ժամը 11 45ին, ուր դիմաւորուեցաւ եկե-

ղեցւոյ Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Նարեկ Վրդ. Ալեմէզեանի, նախկին այցելու Հովիւ Արժ. Տ. Գուրգէն Քհնյ. Եարալեանի, Հոգարարձութեան եւ 10-ամեակի Յանձնախումբի անդամներուն, հաւատացեալներու եւ հայ մամուլի ու Լոս Անճելըսի «Հորիզոն» հեռատեսիլի յայտագրի ներկայացուցիչներուն կողմէ: Ինքնաշարժներու թափօրով Վեհը առաջնորդուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Մուտքին, օրհնեց աղն ու հացը եւ երկու փունջ ծաղիկ ստացաւ փոքրիկներ Անէթ Խուտեանէ եւ Արքայ Մովսէսեանէ: Ապա, մանուկներու եւ զբոսորաց խումբի շարքին մէջէն մտաւ եկեղեցի՝ «Հրաշափառ» շարականի հնչիւններով:

Կանոնական աղօթքէն ետք, Առաջնորդ Սրբազանը ողջոյնի խօսք ուղղեց Պրիթիչ Գոլոմպիայի եւ մերձակայ հայութեան անունով բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հօր: «Այսօր, պայծառացած եկեղեցի մը կը տեսնէք. եկեղեցի մը, որուն հիմքը Դուք օրհնեցիք ասկէ ետքը տարիներ առաջ՝ արուեստական պատուանդանի մը վրայ կեցած, բայց տեսիլքը Ձեր աչքերուն՝ յոյս եւ խանդավառութիւն տուիք տեղւոյս երիտասարդութեան եւ ժողովուրդին», ըսաւ Սրբազանը: Ան յիշեց, թէ Վեհափառը Իր օրհնարաշխ Աջով օծած էր Տակլըսթընի Ս. Սարգիս, Շիքակոյի Ամենայն Սրբոց եւ Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցիները եւ ամէնուրեք արձարձած հայ հաւատքը:

Վեհափառը տուաւ Իր պատգամը: Նորին Սրբութիւնը յիշեց, թէ ինչպէս եօթը տարիներ առաջ եկած էր Վանդուվրը եւ փոթորկոտ օր մը կատարած էր հողօրհնէքը եկեղեցւոյս եւ Հայ Կեդրոնին: «Դուք այս եկեղեցին եղաք ու կ'ըլլաք բազում անգամներ: Բայց ինձի համար առաջին անգամն է, որ այս սրբազան յարկէն, Աստուծոյ տան սեմէններս կը մտնեմ: Ու այս պահուն, սրտի խորագոյն անկեղծութեամբ փա՛ռք կու տամ Ամենակալին, որ շնորհիք ըրաւ ինձի, որ այս պահը այրիմ փոքրաթիւ կոչուած բայց սրտով այնքան եռանդուն եւ աշխոյժ ու կորովի մեր գաղութի գաւակներուն հետ», ըսաւ Ան: Ապա, Վեհափառը անդրադարձաւ հայուն շինարար շնորհքին, որով ան մասնակից դարձած է Աստուծոյ ստեղծագործութեան եւ ամէն անգամ երբ թշնամիներ քանդած են հայուն կառուցածը, ան նորը շինած ու կերտած է: «Դուք այս եկեղեցւոյ եւ սրահի կառուցումով Հայոց Պատմութեան ուղիղ ցանապարհին մէջ էք:

Ապրիլի 5-ը որովհետև ձեր մեջ կ'ապրեցնեմ ձեր ազգը, ձեր մեջէն կ'ապրի Աստուծոյ հոգին ու ազգին ոգին», ըսաւ Վեհափառը ու շնորհակալութեան եւ շնորհաւորութեան խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազան Հօր, Հովիւին, Հոգաբարձութեան, յարակից մարմիններուն, բարերարներուն եւ բարեպաշտ ժողովուրդին, որոնք մասնակցութեան ու զոհողութեան գերազոյն գիտակցութեամբ Աստուծոյ ու ազգին ընծայեցին այս եկեղեցին ու կեդրոնը: Քաջալերեց եկեղեցւոյ ծառայութեան լծուած երիտասարդներն ու պատանիները եւ յորդորեց զիրենք հետեւողականօրէն պայծառացնել Աստուծոյ տունը: «Կոչ կ'ուղղեմ ձեզի, որ այս եկեղեցին շինելէն ետք, դուք շէ'ն պահե՛ք զայն: Եկե՛ք, այսօր, Աստուծոյ այս տաճարին մէջ որոշում մը առնենք.— մենք այս եկեղեցին ամբողջապէս պիտի սեփականացնենք. այս եկեղեցւոյ տէր պիտի դառնանք: Ազգը պարտք պէտք է ունենայ. որովհետև, ազգը մէկ պարտք ունի, որ իր զարգացումըն է, իր յառաջացումը», եզրակացուց Գարեգին Բ. Կաթողիկոս:

Վեհափառ Հայրապետը «Ուրախ Լեր» շարակաւոր եւ «Ի Վեհ Բարձանց» մաղթերգի երգեցողութեամբ մտաւ Հայ Կեդրոնի Լազարեան Սրահը, ուր Հովիւ Հայր Սուրբը բարի գալուստի խօսք մը ուղղեց եւ ըսաւ. «Վեհափառ Հայր, Պատմութեան համար կը փափաքեմ հաստատել, թէ այս հեռաւոր փոքրուց վրայ բարձրացած այս սրբազան կառոյցը Վանգուվրի առաջին հայակերտ ու հայադրոշմ շէնքն է թէ՛ հոգեւոր եւ թէ՛ ազգային կարիքներուն սնունդ մատակարարող: Ու այս իրողութիւնը արդար հպարտութեամբ կը լեցնէ մեր սրտերը եւ ապագային կը բանայ յարաճում ծրագիրներու ցանցով մը, որուն մասնակից կը փափաքեմք ու կը փորձենք դարձնել գաղութի համայն հայութիւնը՝ բոլորինը յայտարարելով այս եկեղեցին ու կեդրոնը «Մէ՛կ Ա.ԶԳ, Մէ՛կ ԵԿԵՂԵՑԻ» հաստատ նշանաբանով»:

Ապա, տեղի ունեցաւ Աջահամբոյր: Եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբը, Վեհափառն ու ներկաները պատուեց յատուկ հիւրասիրութեամբ մը:

\*\*\*

Շաբաթ գիշեր, Վեհափառ Հայրապետը հիւրը եղաւ գաղութի ազգայիններէն Տէր եւ Տիկին Ճորճ Աղազարեանի: Աղազարեաններու բնակարանը հաւաքուած էին չբախումբի հոգեւորականներն ու շուրջ 70 հրաւիրեալներ, որոնք Ամերիկայի ու Գանատայի զանազան շրջաններէն եկած էին ուրախակից դառնալու Վեհափառ Հօր շնորհաբաշխ այցին ու եկեղեցւոյ 10-ամեակի հանդիսութեանց: Աղազարեաններու տան մէջ, Վեհափառ Հօր

այցելեցին Վանգուվրի Քաղաքապետ Տիար Կորտըն Գէմպլը եւ այլ պաշտօնական հիւրեր:

Ճաշկերոյթի ընթացքին, ազգային բարերար Տէր եւ Տիկին Վահան Շամլեան եւ հիւրընկալ զոյգը Լիբանանահայոց կարիքներու գոհացման համար Վեհափառ Հօր տրամադրութեան տակ դրին 25.000-ական տոլար:

Խանդավառ ու հայաբոյր մթնոլորտի մէջ, բաժակաճառերով ու երգերով ճոխացած հաճելի գիշեր մը անցուցին ներկաները:

## ՀԱՆԳԻՍԱՒՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Կիրակի, 10 Յունիս, կէսօրուան ժամը 1:00ին, սկսաւ Ս. Պատարագը, զոր մատոյց Բարձր Տ. Տաթեւ Արք. Սարգիսեան: Սրբազան Հօր կը սպասարկէին Խաթակ Մ. Վրդ. եւ Բաբգէն Վրդ.: Դրպարաց խումբը կը ղեկավարէր Վարուժան Նիկողեան եւ երգեհոնը կը նուագէր Ալիս Լազարեան:

«Հաւատամք»էն առաջ, Վեհափառ Հայրապետը ամպհոգիանի ներքեւ եկեղեցի մտաւ, Առաջնորդ սրբազանին, Եփրեմ Եպիսկոպոսի, Հայր Նարեկի եւ Գուրգէն Քահանայի ընկերակցութեամբ: Ամպհոգիանին կը բռնէին Արմենակ Տէր Յակոբեան, Անտրէ Ամիրեան, Խաչիկ Զարիֆեան եւ Վահէ Յակոբեան:

Քարոզէն առաջ, տեղի ունեցաւ մկրտութեան աւագանի ու պատկերի օծումը՝ ձեռամբ Գարեգին Բ. Կաթողիկոսի: Ապա, Մեսրոպ եւ Եփրեմ Սրբազաններ օծեցին զոյգ գունագարդ պատուհաններն ու միւս հինգ սրբանկարները: Երկու պատուհանները գործն ու նուէրն են Վանգուվրը Կղզիի Գէմպլը Բիվրը շրջանը հաստատուած Տիկին Մելինէ Հանէսեան-Ուիլսոնի, իսկ սրբանկարները գործ՝ վանգուվրաբնակ Տիկին Մելօ Էտինճիկեան-Անֆիլի:

Օծման հոգեպարար պահէն ետք, Վեհափառ Հայրապետը տուաւ իր պատգամը՝ «Օրհնացի, օճի եւ սրբացի...» բնաբանով:

Գարեգին Վեհափառ խօսեցաւ եկեղեցւոյ հոգեղէն կառոյցին ու արժէքին մասին, ու հաստատեց. «Դուք գնեց շաղախեցիք Հայաստանայց Եկեղեցւոյ եւ Հայ Ազգին հետ, որոնք մէկ են ու անբաժան: Եկեղեցին այս միութեամբ կառուցուած է: Շէնք մը շինելով եկեղեցի մը բարձրացուցած չենք ըլլար: Եկեղեցին անհատներու այն համայնութիւնն է, միասնութիւնն է, եղբայրութիւնն է, սիրոյ մթնոլորտն է, միութեան կապն է, որ համայնքի մը ուժը կը կազմէ: Այսօր, դուք օրինակելի եւ Հայոց Պատմութեան մէջ արձանագրուելիք արարք մը կատարեցիք, երբ այս երկրին մէջ, Պրիթիլ Գոլմպիայի Գահանգէն մերս, դուք

ձեր հայութեան տուիք կազմակերպչական արտա-  
յայտութիւն, նկարագիր եւ իմաստ»: Նորին Սըր-  
բութիւնը շնորհաւորեց Առաջնորդ Սրբազանը, Հո-  
վիւ Հայր Սուրբը, նախկին այցելու Հովիւ Քահա-  
նան, Հոգաբարձութիւնը, գործակից մարմինները,  
բարերարներն ու հաւատացեալները իրենց իմաս-  
տութեան, ճիգին, աշխատանքին ու մասնակցու-  
թեան համար: «Հիմա ժամանակն է, որ բոլորդ  
անխտիր, երբ այս եկեղեցին նիւթապէս շինուե-  
ցաւ, հոգեւորապէս, ազգայնապէս, մշակութապէս,  
հայօրէն այնպէս կենդանի, գործօն կեանքի վերա-  
ծէք, որ դառնայ մշտապէս աղբիւր եւ ոչ թէ լին ու  
ձեր կեանքի անդատանքները ռոգուին այս եկեղե-  
ցիով: Եւ եկեղեցին թող եկեղեցիացնէ ձեզ բոլորդ:  
Այսինքն, եկեղեցին դառնայ Աստուծոյ եւ մար-  
դուն հանդիպման այն վայրը, ուր մարդ արարածը  
Աստուծոյ զօրութեամբը ուժեղանայ», ըսաւ Ան:  
Վեհափառը 20րդ դարը բնորոշեց որպէս կրօնական-  
հոգեւոր վերազարթօնքի դար: Օրինակներ բերաւ  
աշխարհի տարածքին ու մեր մայր հայրենիքին մէջ  
արձանագրուող հաւատքի վերընձիւզման դէպքեր: Ն  
ու եզրափակեց. «Ես կը հաւատամ, որ այս պատ-  
մական օրը պիտի դառնայ վերազարթնութեան օր  
մը, վերաշխուժացումի օր մը մեր ամբողջ ժողո-  
վուրդին համար՝ Վանգուվըրի եւ իր շրջաններուն  
մէջ»:

Հաւատացեալներ Ս. Հաղորդութիւն ստացան  
պատարագէից Սրբազանէն: Եկեղեցական արարողու-  
թիւնները աւարտեցան հոգեհանգստեան պաշտօ-  
նով:

\*\*\*

Ճաշկերոյթէն առաջ, կէսօրէ ետք ժամը 4:00ին  
եկեղեցի այցելեց նահանգային վարչապետ Տիար  
Ուիլիւմ Վանտրոզալմ, իր տիկնոջ հետ միասին ու  
պաշտօնական հանդիպում մը ունեցաւ Վեհափառ  
Հօր հետ:

\*\*\*

10-ամեակի ճաշկերոյթը սկսաւ կէսօրէ ետք  
ժամը 4:30ին, Հայ Կեդրոնի Լազարեան Սրահին  
մէջ, 500 հրաւիրեալներու եւ հայորդիներու մաս-  
նակցութեամբ: Օրուան սեղանավարն էր Հովիւ  
Հայր Սուրբը: Պատուոյ սեղանին վրայ Վեհափառ  
Հօր շուրջ նստած էին Տէր եւ Տիկին Ուիլիւմ Վան-  
տրոզալմ — վարչապետ Պրիթիշ Գոլմպիլայի—,  
Ալտըրմըն Ֆիլիպ Օուրն — Ներկայացուցիչ Վան-  
գուվըրի Քաղաքապետարանին—, Ալտըրմըն Ալեքս  
Ութըրթըն — Ներկայացուցիչ Րիչմընտի Քաղաքա-  
պետարանին—, Մեսրոպ Արք., Տաթեւ Արք., Եփ-  
րեմ Եպս., Նաթակ Մ. Վրդ., Նարեկ Վրդ., Բար-  
զէն Վրդ., Գուրգէն Քահանայ եւ երէցկիւն Անոյշ

Եարալեան, Տէր եւ Տիկին Վահան եւ Անոյշ Շամ-  
լեան — պատուոյ հիւր—, Տէր եւ Տիկին Ճորճ եւ  
Պարպըրա Աղազարեան — պատուոյ Ատեմապետ  
10-ամեակի յանձնախումբին — եւ Տիար Արմենակ  
Տէր Յակոբեան — Ատեմապետ Հոգաբարձութեան:

Ճաշկերոյթին ներկայ էին հետեւեալ հիւրերը.—  
Հայր Իվան Լովիկ եւ Անտուու Սրկ. Սոմոզ — Ռուս  
Օրթոտոքս Եկեղեցիէն—, Հայր Տորոթէոս — Յոյն  
Օրթոտոքս Եկեղեցիէն—, Հայր Մայքըլ եւ Ճէյմս  
Սրկ. — Հնդկ Օրթոտոքս Եկեղեցիէն—, Հայր Պիլ  
Մենտընզոլ եւ Հայր Կալլօ — Կաթոլիկ Եկեղե-  
ցիէն—, Հայր Փոլ Հէյքըր եւ Պրն. Չարլզ Էնտըր-  
սըն — Յունալոյս Չրչ-էն—, Տէր եւ Տիկին Ատի  
Թատրոս եւ Տէր եւ Տիկին Ճորճ Հապիպ — Ղպտի  
Օրթոտոքս Եկեղեցիէն—, Պրն. Ճան Ֆայլատ —  
Մեքսիկ Եկեղեցիէն—, Տիար Ստեփան Գապատայ-  
եան — Կլէմէնտի Ս. Աստուածածին Եկեղեցիէն—,  
Մէյքըր եւ Տիկին Ուիլիւմ Մերիթ — Սէլվէյըն Ար-  
մի-էն—, Տէր եւ Տիկին Ազիզ Նախի — Պրիթիշ  
Գոլմպիլայի Միջ-կրօնական Կազմակերպութեան—,  
Տէր եւ Տիկին Րիչըրտ Նափարօ — Ուըրլու Վիժըն  
Գանատա Կազմակերպութեան—, Տիկին Գէյթի  
Գոլըս — Գանատական Կարմիր Խաչէն—, Տիկին  
Հուրի Նաճարեան — Հայ Օգնութեան Միութեան  
Կեդրոնական Վարչութեան—, Պրն. Րընէ Կոլմարն  
— Գանատեան Ճուրջ Գոնկրէս-էն—, Շըրլի Սթո-  
քըր, Ճան Բլուկ եւ Հենրի Շուլզ — Սի Բէյ Էն Տա-  
պըլու Ռատիոյէն—, եւ Ֆլին Րիչի — Քրիստոս  
Ինֆօ Նիուզ թերթէն—:

Եկեղեցւոյս 10-ամեակը կը հովանաւորէին հե-  
տեւեալ ազգայինները.— Տէր եւ Տիկին Ժազ Պար-  
տազեան, Տէր եւ Տիկին Անտի Անտոնեան, Տէր եւ  
Տիկին Ճորճ Մահչիկեան, Տէր եւ Տիկին Հենրի  
Սահակեան, Տէր եւ Տիկին Սթիվ Մինասեան, Տէր  
եւ Տիկին Վահէ Զէրքէզեան, Տէր եւ Տիկին Վահէ  
Եազուպեան, Տէր եւ Տիկին Սարգիս Եկէնեան,  
Տիար Սահակ Օհաննէսեան, Տիար Շահէ Գէորգեան,  
Տէր եւ Տիկին Գրիգոր Շէնեան — Գալիֆորնիա-  
յէն—, Տէր եւ Տիկին Լեոն Թոքաթլեան եւ Տիկին  
Թադուհի Աղազարեան — Մասաչուսեթսէն—, Տէր եւ  
Տիկին Ալպըրթ Պետրոսեան — Օրըկընէն—, Տէր եւ  
Տիկին Սերգօ Թոքաթլեան — Ուաշինկթընէն—, Տէր  
եւ Տիկին Մանաս Թիթիգեան եւ Տէր եւ Տիկին Հը-  
րայր Շամասեան — Թորոնթոնյէն—, Տէր եւ Տիկին  
Սահակ Լազարեան, Տէր եւ Տիկին Արմենակ Տէր  
Յակոբեան, Տէր եւ Տիկին Յակոբ Յակոբեան, Տէր  
եւ Տիկին Վահէ Յակոբեան, Տէր եւ Տիկին Բենիա-  
մին Մինճի, Տէր եւ Տիկին Անտրէ Ամիրեան, Տէր  
եւ Տիկին Ալպերթ Սայմըն, Հայորդի մը, Տէր եւ  
Տիկին Նաչիկ Զարիֆեան, Տէր եւ Տիկին Վազգէն  
Մովսէսեան, Տէր եւ Տիկին Յարութիւն Գապազ-  
եան, Տէր եւ Տիկին Գօգօ Հոռուսիեան, Նուէր եւ  
Սալբի Աղազարեան, Տէր եւ Տիկին Արթիւր Սայ-

մըն, բարեպաշտուհի մը եւ Տիար Կարօ Հոսիկեան — Պրիթիշ Գոլոմպիայէն—, Տէր եւ Տիկին Վարուժան Պասմաճեան — Գալկըրիէն—, եւ Տէր եւ Տիկին Քրիս Զաքմաճեան — Էտմընթընէն—:

Հայ մամուլէն ներկայ էին Գրիգոր Շէնեան — Նոր Կեանք—, եւ Յարութ Սասունեան — Գալիֆորնիա Գուրբըր—:


Ճաշկերոյթը սկսաւ Վեհափառ Հայրապետի սեղանի օրհնութեան աղօթքով եւ Գանատական քայլերգի ու «Ի Վեհ Բարձանց» մաղթերգի յօսնկայս ունկնդրութեամբ, զորս երգեց Վարուժան Նիկոլեան:

Ճաշկերոյթի գեղարուեստական բաժնին մէջ մաս առին.— Տիկին Արփինէ Գրիգորեան, Արմէն Պօղոսեան եւ Քրիստափոր Գապագեան՝ ասմունք. Լի Մէքըր, Թանիա եւ Նաթալի Հոուսիեաններ ու Ռոզինա Զարիֆեան՝ դաշնակ. Անահիտ Մովսէսեան եւ Սիրական Քէօրփիւնեան՝ մեմբրգ:

Նարեկ Վրդ. անգլերէն լեզուով խօսք մը ուղ-

ղեց եւ շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հօր, Վարչապետին, կառավարական, կրօնական ու բարեսիրական կազմակերպութեանց ներկայացուցիչներուն, հովանաւորողներուն, բարերարներուն, Հոգարարձութեան, 10-ամեակի Յանձնախումբին, Տիկնաց Յանձնախումբին ու ներկաներուն, որոնք մասնակից դարձան համայնքիս հիմնադրութեան 10-ամեակի պատմական նշումին: Հայր Սուրբը կոչ ուղղեց բոլորին համախմբուելու եկեղեցւոյ շուրջ ու շարունակելու Աստուածահաճոյ ու ազգապանծ գործունէութիւնը, զոր Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին կը ծաւալէ Սփիւռքի ամէնէն հեռուոր մէկ անկիւնը:

10-ամեակի Յանձնախումբին եւ Հոգարարձութեան անունով խօսք առաւ Վահէ Յակոբեան, որ ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց եկեղեցւոյ ու կեդրոնի շինարարական ու կազմակերպչական փուլերը, գաղութիս մնայուն հովիւով մը օժտուած ըլլալու բախտաւորութիւնը եւ տասնամեակի մը եր-



Առաջնորդ Սրբազանը կ'օժէ սրբանկարները



Բարեպաշտ ժողովուրդը կրօնական արարողութեանց պահուն



Վեհափառ Հայրապետը բարոգի պահուն



Հաւատացեալներ կը հետեւին հոգեգմայլ արարողութեանց

ջանկալից բարիքները:

Ազգային բարերար Տիար Վահան Շամլեան սրտի խօսք մը ուղղեց եւ շեշտեց իր տիկնոջ ու իր մասնաշաղկապ ուրախութիւնը այս անմոռանալի օրը Վանգուվրը անցընելուն համար: Ան մասնաւորեց, թէ Վեհափառ Հօր այցը եւ եկեղեցւոյ տանաւանակի տօնախմբութիւնը ժողովուրդին մօտ պէտք է արթնցնէ զոչոքութեան, նուիրումի ու պահանջատուութեան ոգին:

Տաթեւ Արք. Սարգիսեան, յանուն Արեւմտեան Թեմի Ազգային Վարչութեան Քաղաքական ու Կրօնական Ժողովներուն եւ Ժողովուրդին խնդակցութեան խօսք մը արտասանեց, եւ ըսաւ. «Այս բոլոր համախառնութիւններէն ետք, սիրող սիրտ մը պիտի մնայ բոլորիս մէջ, որ մեզ կը կապէ Աստուծոյ եւ ազգիս»:

Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Մեսրոպ Արք. Աշճեան, յանուն Ազգային Իշխանութեան եւ Թեմիս Հոգեւորականութեան, շնորհաւորեց Հովիւր, Հոգաբարձութիւնը, Տիկնանց Յանձնախումբը, 10-ամեակի Յանձնախումբը, բարերարները, Դպրաց խումբը, եկեղեցւոյ սպասարկողները եւ բարեպաշտ ժողովուրդը: Յիշեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ կազմաւորման ու աճման հանգրուանները, 1988 թուի կեդրոնի բացման ու եկեղեցւոյ օժման պայմանները, եւ քաջակերպ բոլորը տէր ու պաշտպան կանգնելու արդէն իսկ 10 տարուան բերքով հասունցած այս եկեղեցւոյ: «10 տարին յարաբար կարճ է: Սակայն, այս եկեղեցին անուշութիւն մը ունի. որովհետեւ, մեր Թեմին բնիկամիւնն է, ամէնէն երիտասարդ, ամէնէն մանուկ եկեղեցին է, որ այսօր հագիւ 10 տարեկան եղաւ», ըսաւ Սրբազանը: Ապա, հրաւիրեց Հայր նարեկը որպէսզի յանուն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ յիշատակի նուէր մը տայ Վեհափառ Հօր: Հայր Սուրբը Գարեգին Բ. Կաթողիկոսի նուիրեց ձեռաց ոսկեայ խաչ մը եւ հիւր հոգեւորականներուն՝ ոսկեայ կուրծքի խաչեր: Սոյն նուիրներուն պատրաստութիւնն ու ծախսը կատարած էին Տէր եւ Տիկին Վահէ եւ Գլարա Յակոբեաններ, որպէս ուխտի նուէր եկեղեցւոյ 10-ամեակին առթիւ:

Նորին Սրբութեան ձեռամբ յիշեալ կազմակերպութեանց ու անհատներուն տրուեցան «Գնահատամէքի Գիր»-ը. — 1. Արժ. Տ. Գուրգէն Գճնյ. Եարախանին, որպէս այցելու հովիւ իր մասուցած տարիներու ծառայութեան համար, 2. Տիար Ժորճ Ազգաբարձեանին, եկեղեցւոյ ու կեդրոնի բարեգարգման համար իր կատարած նուիրատուութեան ու ամբողջական մասնակցութեան համար, 3. Գանատական Կարմիր Նաչի Պրիթիչ Գոլոմպիայի բաժանմունքի ներկայացուցիչ Գէյթի Գոլըսին, Հայաստանի երկրաշարժի աղէտաւններուն ընձեռուած օգնութեան համար, 4. Սի Դէյ էն Տալլընու ուստիո-

կայանի ներկայացուցիչ Շըրլի Սթոքըրին, Հայաստանի երկրաշարժէն ետք իրենց անձնակազմը, զբոսանեակ մը եւ լրատուական բոլոր միջոցները մեր գաղութի տրամադրութեան տակ դնելուն համար:

Առաջին երկու պարգեւատրուողները ներկայացուց Արմենակ Տէր Յակոբեան, երրորդը՝ Գլարա Յակոբեան, չորրորդը՝ Վահէ Յակոբեան:

Հ.Օ.Մ.ի Վանգուվրի Արագ մասնաճիւղին անունով խօսք առաւ Սոնա Պետրոսեան, որ ներկայացուց Հ.Օ.Մ.ի Կեդր. Վարչութեան փոք-ատենապետուհի Տիկին Հուրի Նաճարեանը, անդրադարձաւ Հ.Օ.Մ.-ի Եկեղեցւոյ ու Կեդրոնի շինարարութեան բերած նիւթական ներդրումին, որ հասած է 115.000.00 տոլարի, եւ 15.000.00 տոլարի չէք մը փոխանցեց Հայր Սուրբին:

Մեծայարգ Վարչապետ Տիար Ուիլեմ Վանտըրզալմ խօսք առաւ եւ բարձրօրէն գնահատեց Պրիթիչ Գոլոմպիայի հայութեան աշխատունակ ոգին ու պարտաճանաչ քաղաքացիութիւնը. շնորհաւորեց Վեհափառ Հօր այցն ու եկեղեցւոյ 10-ամեակը եւ նոր նուաճումներ մաղթեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ համայնքին:

Ճաշկերոյթի օրհնութեան խօսքը կատարեց Վեհափառ Հայրապետը: Ան, նախ անգլերէն լեզուով շնորհակալութեան խօսք ուղղեց Վարչապետին ու բոլոր պաշտօնական հրաւիրեալներուն, անդրադարձաւ այս օրերուն այնքան ճակատագրական բընոյթ ունեցող Գանատայի ամբողջականութեան հետապնդման աշխատանքներուն ու ժողովներուն — Միչ Լէյք բնորոշումով ծանօթ—, եւ խնդրեց, որ Գանատական կառավարութիւնն ու ժողովուրդը միշտ նեցուկ հանդիսանայ Հայ ժողովուրդին արդարութեան, Ղարաբաղի ու Մեծ Եղեռնի բնազաւառներէն ներս: Վեհափառը նաեւ Վարչապետին տուաւ Կիլիկեան Կաթողիկոսութեան քանդակը կըրող յիշատակի նուէր մը: Նորին Սրբութիւնը ապա հայերէն լեզուով արտայայտուեցաւ ժողովուրդին եւ ըսաւ. «Վստահ եմ, որ այս օրը պիտի արձանագրուած մնայ ձեր յիշողութեան մէջ: Շատ պահեր կու գան ու կ'երթան. քիչ պահեր են որոնք կը մնան եւ մեր կենսագրութեան մէջ կ'անցնին: Այս օրը մեզմէ ամէն մէկուս կենսագրութեան էջերուն մէջ իւրայատուկ տեղ պիտի ունենայ: Որովհետեւ, այս օրը եզակի, բացառիկ օր է: Կ'ուզեմ, որ զգամք բոլորս ալ, թէ Հայոց Պատմութեան կերտումին մէջ մասնակիցներ ենք»:

Վեհափառը անգամ մը եւս շնորհաւորեց եկեղեցւոյ 10-ամեակը եւ կատարեց հայրական բարեմաղթութիւններ: Ապա, ընդլայնելով իր խօսքի շրջագիծը, Վեհափառը վերլուծեց Հայ ազգի ներկան «Ազգը քակտագրական օրերու մէջէն կ'անցնի», ըսաւ Ան, «արթուն եւ պատրաստ կեցէք»: Ու

չեչտեց ազգային միասնականութեան, զիտակցութեան եւ նախանձախնդրութեան հրամայականը ըստեղծող բոլոր կացութեանց դիմաց: «Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, մեր աւագ եղբոր, հետ երկարօրէն խորհրդակցեցանք ու անգամ մը եւս հաստատեցինք, թէ մեր ամբողջական եկեղեցին ու ազգը մէկ ցամբայ ունի: միութեան ու միասնականութեան, գործակցութեան ու լծակցութեան ցամբայ: Ներմտութիւն, ցղնիմ հաշիւներ, կողմնակցութիւն ներքին չեն ոչ ոքի», ըսաւ Վեհափառը վճռականօրէն: Եւ խօսքը մասնաւորելով Վանգուլըրի եւ շրջակայից հայութեան, Ան գնահատանքով ըսաւ. «Դուք փոքր չափանիշերով թերեւս դիտէք ձեր անմիջական շրջապատն ու հարցերը: Բայց ես թարգմանը պիտի ըլլամ ձեր ըրածին ուրիշ գաղութներու մէջ, եւ պիտի ըսեմ. — բոլոր մը հայեր, փոքրիկ խումբ մը հայեր, երբ Վանգուլըրի մէջ այսպիսի եկեղեցի եւ կեդրոն կը կառուցանեն, հալալ ըլլայ ձեր անունը, արդար ըլլայ ձեր վաստակը, ձեր ցակատներէն համբուրեմ»: Վեհափառը յիշեց, թէ 1986ի Նոյեմբեր 22ին, «Կիլիկիան Ասպետ»ի շքանշանով պատուած էր Եկեղեցւոյս բարերար Տէր եւ Տիկին Ժագ Պարտազճեանը եւ Կեդրոնի սրահի բարերար Տէր եւ Տիկին Սահակ Լազարեանը, ու ըսաւ. «Այսօր, պիտի պատուեմ ուրիշ գոյգ մը, որ իր նիւթականն ու ժամանակը տուաւ այս տեղին ու գաղութին», եւ իր մօտ հրաւիրեց Տէր եւ Տիկին Ճորճ եւ Պարպրա Աղազարեանները ու շարունակեց. «Այսօր, սիրելի Ճորճ եւ Պարպրա, ի ներկայութեան ձեր ընտանիքի անդամներուն եւ այսօր հոծ բազմութեան, որ ձեր սրտին այնքան մօտիկ է, եւ ընդառաջելով ձեր Առաջնորդ Սրբազանի փափաքին ու խնդրանքին, եւ անոր միացնելով մեզ մեր Կաթողիկոսութեան եւ անձնապէս իմ՝ իրրեւ Կաթողիկոսի՝ գնահատանքը, կ'ուզեմ յայտարարել, Ճորճ, որ երիտասարդ տարիքի, ազգին սէրը արիւնիք մէջ շաղխելով եւ բու իմքնութիւնդ գոհարեցնելով զքեզ անուրախութեամբ զրուցանելով ու միշտ քեզի մեցուկ ունենալով ազնիւ տիկիւնդ, մայրդ, բոլորդ եւ զաւակներդ, մեծ ծառայութիւն մատուցանած ես Վանգուլըրի մեր սիրելի համայնքին: Հետեւաբար, այսօր, ձեր կուրծքերը կը զարդարեմ «Կիլիկիան իշխան»ի եւ «Իշխանուհի»ի շքանշանով»:

Հայր Սուրբը բոլոր հանդիսականներուն անունով շնորհակտեց Աղազարեան ամուլը:

Ամպիրոնը յանձնուեցաւ Կիլիկիայի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգաբարձութեան կողմից ու ժրջան երկարամեայ տեսնապետ Տիար Ստեփան Գապատայեանին, որ եզակի ձեռնհասութեամբ վարեց օրուան հանգանակութիւնը: Նախ, ան հրաւիրեց սեղանակիցները յոտնկայս խմելու Վեհափառ Հօր գահակալութեան 13րդ տարեդարձի կե-

նացը: Ապա, մոմավառութեամբ, խոստումնազերբով եւ նուիրատուութեամբ մղեց ներկայ ժողովուրդը միանգամ ընդմիշտ եկեղեցին ու կեդրոնը ձերբազատելու պարտքի տաղտուկէն: Տիար Ստեփան Գապատայեանի քաջալերից ու խթանիչ խօսքերով եւ ժողովուրդին սրտարուստ նուէրներով գոյացաւ 450.000.00 տոլարի գումար մը: Օրուան խանդավառութիւնը հասաւ իր գագաթնակէտին, երբ գաղութս ամբողջապէս տէրը դարձաւ եկեղեցւոյ ու կեդրոնի շէնքին:

Հանգանակուած ու խոստացուած գումարները կը ներկայացնեն հետեւեալ նիւթական պատկերը. — Տէր եւ Տիկին Ճորճ Աղազարեան՝ 250.000.00, Տէր եւ Տիկին Սահակ Լազարեան՝ 115.000.00, Տէր եւ Տիկին Ժագ Պարտազճեան՝ 10.000.00, Տէր եւ Տիկին Վահան Շամլեան՝ 10.000.00, Հ.Օ.Մ.Ի Արազ Մասնաճիւղ՝ 15.000.00, Տիկնանց Յանձնախումբ՝ 5.000.00, Տէր եւ Տիկին Անտի Անտոնեան եւ բարեկամներ՝ 5.000.00, Տէր եւ Տիկին Վահէ Յակոբեան՝ 5.000.00, Վանգուլըրի Համազգային՝ 1.000.00, Վանգուլըրի Երիտասարդաց՝ 1.000.00, Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցի՝ 500.00, Տէր եւ Տիկին Վարուժան Պատմաճեան՝ 2.000.00, 1.000.00-ական՝ 10-ամեակը հովանաւորողներ եւ Տէր եւ Տիկին Փոլ Անտոնեան, Մի ոմն, Տէօվլէթեան ընտանիք, 500.00-ական՝ Տիկին Է. Գալուստեան, Տէր եւ Տիկին Ս. Թորթալեան, Տէր եւ Տիկին Վ. Անտոնեան, 300.00-ական՝ Սողոմոնեան ընտանիք, Տէր եւ Տիկին Ս. Գոնիւլեան, Տէր եւ Տիկին Ճ. Շահնազարեան, 200.00-ական՝ Եղաճեան Գ., Տէր Յակոբեան Յ., Բոչկէրեան ընտանիք, Մահաբէրեան ընտանիք, 150.00՝ Մովսէսեան Ն., 100-ական՝ Գալուստեան Խ., Հորոգեան Տ., Հգնաւորեան Ա., Համֆրիս Տ., Ստեփանեան Լ., Խաչատուրեան Պ., Շահնազարեան Ս., Մովսէսեան Հ., Նահարեան Հ., Բիստակ Ֆ., Նիքոլս Մ., Այանեան Ն., Թորթալեան Յ., Մարգարեան Մ., Բուլահեան Ն., Պողոսեան Ա., Բիւրքճեան Հ., Խաչերեան Գ., Խաչերեան Ս., 50.00 ական՝ Մաթոսեան Պ., Մարգարեան Ա., Հոխիկեան Ռ., Թէրգեան Զ., Ֆայատ Ճ., Գալտանի ընտանիք, Կիւրիւնլեան ընտանիք, 30.00՝ Ստեփանեան Փ., 25.00-ական՝ Մարգարեան Ա., Պողոսեան Ա., Թէրգեան Կ., 20.00 ական՝ Մարգարեան Ա., Տայլէրեան Մ., Դագիլեանեան Ա., Թէրգեան Լ., Միւնճի Բ., Միւնճի Խ., Ապարեան ընտանիք, Փափազեան Ա., 15.00՝ Տէր Յակոբեան Ա., 10.00՝ Մարտունեան Ա., 5.00՝ Յարութիւնեան Ա., 2.00՝ մի ոմն:

Ճաշկերոյթի ընթացքին, ներկաներուն բաժնուեցան այս առթիւ պատրաստուած Յուշամատեններ:

Այս պատմական օրը աւարտեցաւ «Կիլիկիա»ի հաւաքական երգեցողութեամբ ու Վեհափառ Հօր

428, 447

«Պահպանիչ»ով:

Երջանկութեան ու հպարտութեան փայլքը կը ճառագայթէր բոլորին աչքերէն: Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հոգեւոր մատակարարման բարեքները վայելող Պրիթիչ Գոլոմպիայի ու շըրջակայից հայ մեծ ընտանիքը արդարօրէն կը հրճուէր ու հոգեպէս կը բաւարարուէր, որովհետեւ իր նպատակակէտերուն հասած էր ու գաղութի կեանքին մէջ նոր հորիզոններու առաջատներ կը բացուէին: Հայավայելօրէն ընդունուած էր Վեհափառ Հայրապետը, պատուուած էին բոլոր վաստակողներն ու հայ թէ օտար հրաւիրեալները, կառավարութիւնը իր բոլոր մակարդակներուն վրայ ամբողջական ու վայելուչ մասնակցութիւն բերած էր 10-ամեակի հանդիսութեանց ու յարգած հայոց Հայրապետն ու հայ ժողովուրդը, պայծառագարդուած էին եկեղեցին ու կեդրոնը, ժողովրդային աննախընթաց ներկայութիւն մը խմբուած էր Աստուծոյ տան ու ազգային օճախի կամարներուն տակ, բարերարներու, նուիրատուներու ու ժողովուրդի բոլոր զաւակներուն սրտարուխ նուիրատուութիւններով շիջած էր պարտքը: Հայուն պատիւ բերող ու բոլորը գոհացնող օր մը կը յանձնուէր պատմութեան ու պատմութիւնը պայծառ գիրբերով կ'արձանագրէր.— 10 Յունիս 1990, 10-ամեակ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ, Պրիթիչ Գոլոմպիա, Գանատա:

\*\*\*

Կիրակի գիշեր, ժամը 9:30ին, գաղութի բարերար Տէր եւ Տիկին Ճորճ Աղազարեան, ի պատիւ Վեհափառ Հօր, ճաշկերոյթ մը տուին Հայս Մենչըն ճաշարանին մէջ, որուն ներկայ եղան հոգեւորականներու շքախումբը, Ամերիկայի Միացեալ Նահանգներէն եկած ազգայիններ եւ վանդուվրարնակ ազգայիններ:

**ԵՐԿՈՒՇԱՅԹԻ, 11 ՅՈՒՆԻՍ 1990**

Վեհափառ Հայրը, հոգեւոր հայրեր ու խումբ մը ազգայիններ, Տէր եւ Տիկին Ճորճ Աղազարեաններու հրաւերով, մեկնեցան Վիքթորիա մայրաքաղաք՝ մտերմիկ պտոյտի եւ միօրեայ հանգիստի համար:

Նոյն իրիկուն, Վեհափառն ու շքախումբը ընթրիքի հիւրը եղան եկեղեցւոյ բարերար Տէր եւ Տիկին Ժագ Պարտագճեանի, Տայնըսթի ճաշարանին մէջ:

**ԵՐԵՔՇԱՅԹԻ, 12 ՅՈՒՆԻՍ 1990**

Առաւօտեան ժամը 10:30ին, Վեհը, Նարեկ եւ Բարգէն վարդապետներու եւ Վահէ Յակոբեանի ընկերակցութեամբ, այցելեց Սի Բէյ Էն Տա-

պըլեու ռատիոյի կեդրոնատեղին եւ հարցազրոյց մը ունեցաւ Հայ Եկեղեցւոյ, Հայաստանի ու Լիբանանի կացութեան եւ էքիւմենիկ շարժման մասին: Հարցազրոյցը ուղղակիօրէն ձայնասրժուուեցաւ ամբողջ Պրիթիչ Գոլոմպիայի մէջ:

Կէսօրին, Վեհափառը, հոգեւորականաց դասը եւ եկեղեցւոյ 10-ամեակը հովանաւորած վանդուվրարնակ հայորդիներ ճաշի հիւրը եղան Հայ Կեդրոնի սրահի բարերար Տէր եւ Տիկին Սահակ Լազարեանի, Պիչհաուս ճաշարանին մէջ: Ծաշկերոյթի ընթացքին խօսք առին Հոգաբարձութեան Ատենապետ Տիար Արմենակ Տէր Յակոբեան, Դիվ Հայր Սուրբը եւ Առաջնորդ Սըրբազանը:

Բարձր Տ. Մեսրոպ Արք. ըսաւ. «Ամէն գեղեցիկ պահ իր աւարտը ունի: Ու այսօր, այս սիրոյ սեղանով կ'աւարտի Վեհափառ Հօր մեր Թեմին շնորհած հովուապետական այցը»: Ապա, Սըրբազանը ապահով վերադարձ մաղթեց Վեհափառին Ս. Աթոռ ու քաջալերական խօսքեր ուղղեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ պատասխանատու մարմիններուն ու ժողովուրդին:

Փակման խօսքը կատարեց Նորին Սրբութիւնը, որ ըսաւ, թէ շատ քաղցր յիշատակներով կը բաժնուի Վանդուվրարի հայութեան: «Եօթը տարիներ ետք աւելի գեղեցկացած ու առաւել պայծառացած գտայ ձեզ՝ ձեր եկեղեցւոյ ու կեդրոնի կրօնարոյր ու հայաշունչ մթնոլորտին մէջ: Շարունակեցէ՛ք ձեր առաքելութիւնը եւ հաստատ գիտցէ՛ք, որ Աստուծոյ օրհնութիւնը եւ Մեր աղօթքները միշտ ձեզի հետ պիտի ըլլան», եզրափակեց Վեհափառը:

Ապա, Վեհափառը կտրեց Իր դահակալութեան 13րդ տարեդարձի կարկանդակը:

Ծաշը աւարտեցաւ «Կիլիկիա»ով եւ Վեհափառ Հօր կողմէ բաշխուած յիշատակի նուէրներով:

Կէսօրէ ետք, ժամը 3:30-5:30, պանդուկի յարկարածին մէջ, Գարեգին Բ. Կաթողիկոս, Առաջնորդ Սըրբազանին ու Հովիւ Հայր Սուրբին ներկայութեան, ընդունեցաւ այցելութիւնը Պրիթիչ Գոլոմպիայի Հայ Մշակութային Միութեան վարչական անդամ-անդամուհիներուն եւ հայկական ձայնասփիւռի յայտազրի ներկայացուցիչին, ու անոնց հետ խօսակցեցաւ համահայկական ու գաղութային հարցերու մասին: Հանդիպման աւարտին, Վեհը հարցազրոյց մը շնորհեց ռատիօժամին, որ ձայնասփուուեցաւ յաջորդ հաղորդումին:

Երեկոյեան ժամը 6:30ին, Վեհափառը հովանաւորեց միջ-կրօնական ճաշկերոյթ-հաւաք մը, որ կազմակերպուած էր Բասիֆիլ Ինթըրֆէյթ Սիթիզընշիփ Ասոսիէեշըն օֆ Պրիթիչ Գո-

լումպիա կազմակերպութեան կողմէ, Սէյնթ Անտրուա Ուէյլի Ունայթըտ Եկեղեցւոյ սրահին մէջ, «Մամուկները մեր ապագայի տեսիլքը» բնաբանով:

Ճաշկերոյթին մասնակցեցան նաեւ Սրբազան ու Վարդապետ Հայրերը եւ գաղութի հայորդիներէն խումբ մը:

Ձանազան կրօններու ներկայացուցիչներ — Կաթողիկէ, Աւետարանչական, Հինտու, Մահմետական, Հրեայ, Սիխ, Ունիթերերն, բնիկ հնդիկ — հերթով խօսք առին ու դրսեւորեցին իրենց հաւատքին ու ականդութեան մէջէն մանուկներու հանդէպ ցուցաբերուող սէրն ու պատասխանատուութիւնը:

Ճաշկերոյթի խօսքերու բաժինը ավարտեցաւ Վեհափառ Հօր պատգամով ու խորհրդածութիւններով: Նորին Սրբութիւնը շնորհակալութիւն յայտնեց միջ-կրօնական կազմակերպութեան նախագահին, որ այս տարի, Յրդ տարուան ճաշկերոյթին հովանաւորութիւնը տուած էր իր Իրեն ու Իր ընդմէջէն պատուած Հայ Եկեղեցին: Վեհափառը ողջունեց բոլոր կրօններու Ներկայացուցիչները, եւ ըսաւ. «Միութիւնը զանազանութեամբ մէջ է եւ զանազանութիւնը միութեամբ մէջ: Նոյն Աստուծոյ ու նոյն մարդկութեամբ պատկերը կը ցոյց տայ բոլորիս մէջէն. եւ այսօր, դուք այդ լուսաշող պատկերն ու ներկայութիւնը մեզի բերիք մամուկներուն մէջէն»: Ապա, Վեհափառը վերլուծեց փոքրիկներու հանդէպ քրիստոնէութեան ու մանաւանդ Հայ Եկեղեցւոյ ունեցած վերաբերումը: Յիշեց Տեառնընդառաջի նախատունակին մեր մանուկներու մատուցուող սուրբ խորանին՝ հայ հոգեւորականին ձեռամբ: Անդրադարձաւ մանուկին աւետարանական անմեղութեան, պարզութեան, խոնարհութեան, ներողամտութեան, մեծնալու ձգտումին ու հնազանդութեան յատկանիշներուն: Ան յուզումով յիշեցուց, թէ տասնեակ հազարաւոր մանուկներ մեռան Հայաստանի աղիտալի երկրաշարժին ու բազմաթիւ մանուկներ տակաւին այսօր անխղճօրէն կը չարչարուին ու կը սպաննուին Լիբանանի մէջ: «Մամուկը մեր ապագան է, մեր մեծնալու ու անխու գրաւակամը. տէր ըլլամք մամուկներուն ու գուրգուրամք անոնց վրայ, որպէսզի պայծառ ու լուսաւոր ըլլայ համայն մարդկութեամբ ապագան», եզրակացուց Ան:

2 ՈՐԵՔՇԱԲԹԻ, 13 ՅՈՒՆԻՍ 1990

Առաւօտեան ժամը 10:30-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախումբով այցելեց եկեղեցւոյ ու կեդրոնի շինութեան ու պահպանման մէջ որոշադրիչ դեր ունեցած եւ ամբողջական նուիր-

րումով անոնց կապուած Տէր եւ Տիկին Արմենակ Տէր Յակոբեանի բնակարանը, ուր դիմաւորուեցաւ ընտանիքի անդամներուն եւ հիւրերու կողմէ ու հիւրասիրուեցաւ նախաճաշով:

Ապա, Նորին Սրբութիւնը այցելեց եկեղեցւոյ ու կեդրոնի կառուցման ու պահպանման լծուած ու ամբողջ սրտով նուիրուած սրահի բարերար Տէր եւ Տիկին Սահակ Լազարեանի բնակարանը, ուր տեղի ունեցաւ մասնաւոր հիւրասիրութիւն:

Վեհափառն ու շքախումբի անդամներ, Հովիւին, Հոգաբարձութեան, 10-ամեակի Յանձնախումբին ու ժողովուրդի գաւակներուն կողմէ առաջնորդուեցան Վանդուվրի միջազգային օդակայան, ուր ողջերթի ու Աջահամբոյրի կարճ պահէ մը ետք, մեկնեցան Գալիֆորնիա, կէսօրէ ետք ժամը 2:00-ին:

\*\*\*

Եկեղեցւոյ 10-ամեակին առթիւ ստացանք հետեւեալ անձերէ շնորհաւորական հեռագիրներ. — Նախարարուհի Գիմ Գէմպլը, Նախարար Սվենտ Բոպինսըն, Նախարար Թոմ Սիտըն, Սըրի շրջանի Քաղաքապետ Բոպըրթ Պոզ, Նիւ Ուէսթ-մինսթըր շրջանի քաղաքապետ էլիզապէթ Թոփորվսթի, Պըրնըպի շրջանի քաղաքապետ Ուիլիամ Քոֆլընտ, երեսփոխան Նիք Լոնըն, Պրիթիշ Գոլոմպիայի Անկլիթան Եկեղեցւոյ Արքեպիսկոպոս Գերշ. Տակլըս Համպիճ, Յունահայոց Առաջնորդ Բարձր. Տ. Սահակ Արք. Այվազեան եւ Ազգ. Վարչութիւն, Վեներաբլայի Հովիւ Գերայ. Տ. Վահան Ծ. Վրդ. Պէրպէրեան, Արաբական Ծոցի Երկիրներու Կաթողիկոսական Փոխանորդ Գերայ. Տ. Օշական Ծ. Վրդ. Չօլոյեան, Ֆիլատելֆիոյ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Հովիւ Գերշ. Տ. Հայկազուն Վրդ. Մելքոնեան, Ուոթըրթաունի Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ Հովիւ Արժ. Տ. Թորգոմ Աւ. Քհյ. Յակոբեան, Մոնթրէպլի Ս. Յակոբ Եկեղեցւոյ Հովիւ Արժ. Տ. Արմէն Քհյ. Իշխանեան, Նորթ Անտովըրի Ս. Գրիգոր Եկեղեցի, Ս. Գէորգ Մելքիթ Եկեղեցւոյ Հովիւ Հայր Մաքսիմոս Փաշա, Պեթ Թիքվատ Հրէական կազմակերպութիւն, Մենոնայթ Սենթրըլ Գոմիթի, Տէր եւ Տիկին Տիգրան Հաճէթեան, Տէր եւ Տիկին Գաբրիէ Գալստեան, Տիկին Սօսի Կարապետեան, Տիար Սուրէն Ուաշտոուրեան, Տէր եւ Տիկին Ալպերթ Վարդանեան, Տիար Շանթ Հայթայեան եւ Տիար Հրանդ Սիմոնեան:

\*\*\*

9-13 Յունիս 1990... հինգ պատմակերտ



# Լիբանանի հայութեան անմիջական կարիքները

(Պատրաստուած Լիբանանի ազգ. առաջնորդարանի կողմէ)

Լիբանանի հայ գաղութը իր կեղերոնական տեղը ունի հայ սփիւռքի մէջ: Լիբանանի մէջ կը գտնուի բոլոր համայնքներու, քաղաքական կուսակցութեանց, ինչպէս նաեւ մշակութային ու մարզական միութեանց կեղերոնատեղիները:

Ներկայիս, Լիբանանի մէջ կը գործեն աւելի քան 40 կրթական հաստատութիւններ, 30 եկեղեցիներ ու բազմաթիւ մշակութային, կուսակցական ակումբներ: Գաղութը ունի նաեւ հայազիտական ուսմանց երեք կեղերոններ, ուսուցչաց մանկավարժական կազմաւորման կեղերոն, սրուեստից վարժարան, երաժշտանոց, ընկերա-բժշկական երկու կեղերոններ, տասէ աւելի դարմանատուններ, ծերանոց, կուրանոց, համրերու եւ ուշ սորվողներու դպրոց եւ երեք որբանոց: Գաղութը հարուստ է նաեւ օրաթերթերով, պարբերաթերթերով եւ հրատարակչատուններով:

Անկասկած որ, Լիբանանի տագնապը իր ժխտական անդրադարձը ունեցաւ մեր կառոյցներուն տնտեսական կացութեան վրայ: Բայց հակառակ այս իրողութեան, անոնք մնացին կենսունակ ու շարունակեցին իրենց դերակատարութիւնը Լիբանանի հայութեան հաւաքական կեանքին մէջ:

Սակայն վերջին ամիսներու կոյր ումրակոծումները (31 յունուար 1990-էն օրեր Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ համայնքի կեանքին մէջ թէ՛ որպէս իրագործում եւ թէ՛ որպէս կենդանի վկայութիւն հայ հաւատքին, տեսիլքին ու ոգիին):

Վեհափառ Հօր բաժանումէն հտք, երբ առօրեայ գրաղումներ եկան աստիճանաբար լեցնել Պրիթիչ Գոլումպիայի ու շրջակայից հայութեան կեանքը, եկեղեցին չբացակայեցաւ ապրումներէն եւ զգացումներէն հաւատացեալ եւ հաւատարիմ հայորդիներուն, ու հնչեցին յաւերժաբարբառ բառերը Հայրապետին եւ արձագանգեցին ներաշխարհներուն մէջ. — «ԴՈՒՔ ԷՔ ԵԿԵՂԵՑԻՆ: ՔԱՐԷՆ ՈՒ ՓԱՅՏԷՆ ԱՆԴԻՆ ԵՒ ԵՏՔ ԿԱՌՈՒՑԷՔ ՁԵՐ ՀՈԳԵՇԷՆ ՈՒ ՈԳԵԿԵՐՏ ԵԿԵՂԵՑԻՆ»: ՀՈՎԻՒ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

սկսեալ) որոնք առաւելաբար տեղի ունեցան — ու կ'ունենան — հայահոծ շրջաններուն մէջ, իրենց պատճառած անհամար զոհերուն, վիրաւորներուն եւ նիւթական վնասներուն ու քանդումներուն կողքին նա'եւ յառաջացուցին տնտեսական տագնապ: Կարիքաւոր ընտանիքներուն թիւը զգալիօրէն բարձրացաւ: Մեր բոլոր կառոյցները սկսան դիմագրաւել տնտեսական լուրջ դժուարութիւններ:

Լիբանանի հայոց ազգ. առաջնորդարանը, ինչպէս միշտ, այս անգամ եւս իր կարելին կ'ընէ օգտակար հանդիսանալու իր ժողովուրդին դժուարութիւններուն ու կարիքներուն: Սակայն ներկայ պայմաններուն մէջ մեր ժողովուրդին կարիքները այնքան բազմազան են ու այլազան, որոնք հեռու են ազգ. առաջնորդարանի նիւթական սահմանափակ կարելիութիւններէն:

Արդարեւ, ստեղծուած ներկայ պայմաններուն մէջ ու գոյութիւն ունեցող ներկայ կարիքներուն լոյսին տակ, ազգ. առաջնորդարանը, հայ բարեսիրական միութիւններուն հետ խորհրդակցաբար, մասնաւորաձէ առաջնահերթ ու հիմնական կարիքներու չորս բնագաւառներ, որոնք կը կարօտին անմիջական օգնութեան. — (ստորեւ կու տանք ընդհանուր ծախսերը)

1. — Կարիքաւոր ընտանիքներու օգնութիւն (320 000 000 լիբ. ոսկի = 581 820 ամ. տոլար՝ ամէն ամիս):

2. — Առողջապահական (40 112 000 լիբ. ոսկի = 32 136 ամ. տոլար՝ ամէն ամիս):

3. — Ազգային վարժարաններ (40 112 000 լիբ. ոսկի = 72 930 72 ամ. տոլար՝ ամէն ամիս):

4. — Դպրոցներու ու եկեղեցիներու վերանորոգում (183 503 100 լիբ. ոսկի = 333 642 ամ. տոլար՝ ամէն ամիս):

5. — Տուններու վերանորոգում (1 815 000 000 լիբ. ոսկի = 3 300 000 ամ. տոլար):